

Ի՞նչ պետք իմանաք
թմրանյութերի
նկատմամբ գործող
օրենսդրական դաշտի
մասին:



SOCIAL
JUSTICE
CENTER

Թմրաքաղաքականության ոլորտում վերջին տարիներին Մահմանադրական դատարանի որոշումների հիման վրա բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ են կատարվել՝ ուղղված լիբերալ մոտեցումների ներդրմանը: Փոփոխություններն անդրադարձել են, այդ թվում մարիխուանայի օգտագործման կարգավորմանը: Սակայն, ցավոք թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների կամ իրավախախտումների վերաբերյալ հասարակության ընկալումները և պատկերացումները հաճախ չեն համապատասխանում գործող օրենսդրությանը: Այս գրքույկի նպատակն է հանրությանը տեղեկացնել թմրամիջոցների վերաբերյալ իրավական սահմանափակումների, տույժերի և պատիժների մասին:

Թմրանյութերի կարգավորման ընդհանուր շրջանակ:

Ի՞նչն է պատժվում վարչական կանոնակարգով:

- ▶ Թմրամիջոցների սպառումը (բացառությամբ բուսական կանեփի կամ մարիխուանայի) եւ / կամ փոքր քանակությամբ անօրինական գնելը, պահելը/ պահեստավորումը, առաքում կամ փոխանցումը —
- ▶ Թմրամիջոցների փոքր քանակությամբ ապօրինի ցանել, աճեցնել կամ մշակել —

Կտուգանվի, 500 լարի տուգանքով կամ ազատազրկում մինչև 15 օր ժամկետով:

Ի՞նչն է պատժվում քրեական օրենսդրությամբ:

- ▶ Թմրամիջոցների օգտագործումը (բացի բուսական կանեփից կամ մարիխուանայից) փոքր քանակությամբ ապօրինի արտադրությունը, գնումը, պահպանումը, փոխադրումը, առաքումը կամ եթե անձը նույն արարքի համար վերջին տարում արդեն տուգանվել է, պատժվում է տուգանքով կամ հասարակության համար օգտակար աշխատանքով կամ ազատազրկման կանխարգելում մինչև 1 տարի ժամկետով:
- ▶ Թմրամիջոցների ապօրինի պատրաստումը, ձեռքբերումը, պահպանումը, առաքումը կամ փոխանցումը (ավելի քան փոքր քանակությամբ և ավելի քիչ, քան խոշոր քանակությամբ) պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 6 տարի ժամկետով:
- ▶ Նոր հոգեմեղ նյութերի ցանկացած քանակի ապօրինի պատրաստումը, ձեռքբերումը, պահպանումը, առաքումը կամ փոխանցումը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով:
- ▶ Թմրամիջոցների ապօրինի վաճառք՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 6-11 տարի ժամկետով:



Հիշեք՝ անօրինական քանակությամբ թմրամիջոց գնելու և պահելու համար ազատազրկումը վերացվել է:

- ▶ Թմրամիջոց պարունակող բույսի ապօրինի ցանելը կամ մշակելը՝ պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ 2-ից 5 տարի ժամկետով.
- ▶ Թմրամիջոցների և / կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ տրանսպորտային միջոցի վարելը պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ մինչև 1 տարի ժամկետով:



Ծանուցում. Թվարկված արարքները ծանրացնող հանգամանքներում կատարելիս, տույժերը համապատասխանաբար ավելացվում են:

Քաղաքացիական իրավունքներից զրկում դատարանի կողմից

Թմրամիջոցներ օգտագործողները համապատասխան դատվածության ունենալու դեպքում 3 տարի ժամկետով կսահմանափակվեն հետևյալ քաղաքացիական իրավունքներից ցանկացած տեսակի տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, ուսուժական և պետական հաստատություններում աշխատելու իրավունքից, բժշկական և/կամ դեղագործական, փաստաբանական գործունեության իրավունքից, պասիվ ընտրական իրավունքից, զենք պատրաստելու, պահելու և կրելու իրավունքից:

Նույն իրավունքները կարող են սահմանափակվել մինչև 3 տարի ժամկետով վարչական պատասխանատվության ենթարկված անձանց համար՝ մարիխուանայի անօրինական գնման, պահպանման, փոխադրման, առաքման, սպառման և/կամ ազդեցության տակ գտնվելու համար:

Թմրամիջոցներ ձեռք բերելու, պահելու, իրացնելու համար դատապարտվելու դեպքում վերնշված իրավունքները կարող են սահմանափակվել 5-ից 20 տարի ժամկետով:

Ի՞նչն է օրինական

Մարիխուանայի օգտագործումը մասնավոր տարացքում - բնակելի տանը կամ այլ մասնավոր շենքում, եթե այդ շենքը միաժամանակ չի օգտագործվում տնտեսական գործունեության համար:

Ի՞նչն է պատժվում վարչական ընթացակարգով

- ▶ 21 տարեկանից բարձր անձանց համար ցանկացած տարացքում սպառումը, բացառությամբ մասնավոր սեփականության, պատժվում է տուգանքով՝ 500-ից 1000 լարիի չափով, մինչդեռ 21 տարեկանից ցածր անձանց արգելվում է մարիխուանա օգտագործել ցանկացած պարագայում:
- ▶ Էլ ավելի է խստացվում հասարակական վայրերում/ հանրային տարածքներում մարիխուանայի օգտագործման համար տուգանքի չափը (800-ից մինչև 1200 լարի): Մարիխուանայի առկայության կամ ազդեցության տակ անչափահասի ներկայությամբ (այդ թվում՝ մասնավոր տարածքում), անչափահասների համար նախատեսված հիմնարկներում կամ 18 տարեկանից ցածր անձանց հավաքների ժամանակ կամ 150 մետր մոտակայքում մարիխուանաի օգտագործման տուգանքը սահմանվում է 1000 -1500 լարի:
- ▶ Փոքր քանակությամբ չորացրած մարիխուանա (մինչև 5 գժ), թարմ մարիխուանա (մինչև 10 գժ) և բուսական կանեփ (մինչև 10 գժ) գնում, պահպանում, տեղափոխում, առաքում - տուգանվում է 500 լարիով:
- ▶ Փոքր քանակությամբ թմրամիջոց պարունակող բույսի ապօրինի ցանելը, մշակելը կամ իրացնելը՝ 500 լարի տուգանք կամ ազատազրկում՝ մինչև 15 օր:



Հիշեք: Վարչական սանկցիան/պատժամիջոցը չեղյալ է հայտարարվել կանեփի եւ մարիխուանայի օգտագործման համար միայն անձնական տարածքում օգտագործելու դեպքում:

Ի՞նչն է պատժվում քրեական օրենքով (ազատագրկման հետ չկապված պատիժ)

- ▶ Փոքր քանակությամբ մարիխուանայի ձեռքբերում, պահպանում, փոխադրում կամ առաքում, եթե հանցագործն արդեն տուգանվել է նույն արարքի համար կամ դատապարտվել է հանցանքի համար. և
- ▶ Փոքր քանակից ավել և մեծ քանակությամբ մարիխուանա (չորացրած՝ 5 - ից մինչև 70 գրամ, թարմ՝ 10-ից մինչև 140 գրամ) ապօրինի ձեռքբերում, պահպանում, առաքում կամ փոխանակում, - պատժվում է տուգանքով կամ հասարակական օգտակար աշխատանքներով:



Հիշեք, Քրեական պատասխանատվությունը վերացվել է միայն մարիխուանայի օգտագործման համար:



Հիշեք, անձնական օգտագործման դեպքում չորացրած (մինչև 70 գրամ) և թարմ (մինչև 140 գրամ) մարիխուանա գնելու և պահելու համար նախատեսված ազատագրկմամբ դատապարտվելը չեղարկվել է:

Ո՞ր դեպքերում է նախատեսված ազատագրկումը:

- ▶ Մեծ քանակությամբ (70 գ-ից) և հատկապես մեծ քանակությամբ (500 գ-ից) չորացրած մարիխուանա և թարմ մարիխուանա/կանեփի (մեծ քանակությամբ՝ 140 գ-ից, հատկապես մեծ՝ 1000 գ-ից) գնումը, պահելը, առաքելու, փոխանակելու համար նախատեսված ազատագրկում:
- ▶ Ցանկացած քանակությամբ բուսական կանեփի կամ մարիխուանայի անօրինական իրացումը:
- ▶ Ավելի քան 151 գրամ բույս կանեփի ապօրինի ցանման, աճեցման կամ մշակման համար:



Հիշեք, ազատագրկումը վերացվել է միայն թմրամիջոցների համար - մինչև 151 գրամ բուսական կանեփի անձնական օգտագործման համար ապօրինի ցանելու կամ մշակման համար.



Հիշեք, պատիժ ազատագրկման ժամկետով - «վեցից տասներկու տարի», վերացվել է միայն այն թմրանյութի համար - մինչև 266 գրամ բուսական կանեփ անձնական օգտագործման՝ ապօրինի ցանելու կամ մշակման դեպքում:



SOCIAL
JUSTICE
CENTER

Տեղեկատվական գրքույկը պատրաստվել է «Սոցիալական արդարություն կենտրոնի» կողմից, «Վրաստանում մարդասիրական թմրաքաղաքականության և իրավապահ համակարգին աջակցություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է բաց հասարակության հիմնադրամների աջակցությամբ: